

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ  
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«~~24~~» հունիսի 2019 թվական

N 36 Ա

ք.Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ՝  
ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ՝  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-  
Ի N 78 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի  
73-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014  
թվականի օգոստոսի 5-ի «Պետական անտառները և անտառային հողերն  
օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N 519-Ն որոշմամբ սահմանված  
հավելվածի 30-րդ կետի համաձայն՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Պետական անտառները և անտառային հողերը մրցույթով՝ վարձակալությամբ  
կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծել  
միջգերատեսչական մրցութային հանձնաժողով:
2. Հաստատել՝
  - 1) պետական անտառները և անտառային հողերը մրցույթով՝ վարձակալությամբ  
կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված  
միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:
  - 2) պետական անտառները և անտառային հողերը մրցույթով՝ վարձակալությամբ  
կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված  
միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 2  
հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն  
առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի 2014  
թվականի հոկտեմբերի 24-ի «Պետական անտառները և անտառային հողերը մրցույթով՝  
վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու  
նպատակով միջգերատեսչական մրցութային հանձնաժողով ստեղծելու և  
միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին»  
N 78 հրամանը:



Ֆ. ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

**ԿԱԶՄ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ՝**  
**ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ**  
**ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. Ալեքսանդր Գասպարյան Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
2. Աշոտ Հարությունյան Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ
3. Դիանա Գրիգորյան Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, մասնավորեցման և օտարման բաժնի պետ
4. Գագիկ Բագդասարյան Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետ
5. Սևակ Միքայելյան Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
6. Արամ Բադալյան Արցախի Հանրապետության գյուղատնտեսական նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ
7. Մհեր Համբարձումյան Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ճանապարհաշինության քաղաքականության բաժնի պետ
8. Հարություն Դավթյան Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության բնակչության և տարածքների պաշտպանության բաժնի պետ
9. Արմեն Կասյան Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի գլխավոր հողաշինարար
10. Կարեն Հովհաննիսյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության, հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
11. Շահեն Սարգսյան Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության, հողաշինարարության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ- գլխավոր հողաշինարար
12. Նորայր Սարգսյան Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի

- վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության, հողաշինության և հողօգտագործման բաժնի գյուղատնտես Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
13. Կարեն Եղիշյան
14. Հրայր Սարգսյան
15. Գրիշա Հովհաննիսյան
16. Վահրամ Հայրապետյան
17. Վահրամ Հայրապետյան
18. Բաբայան Անահիտ
- Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսական վարչության հողային ֆինդի կառավարման բաժնի վարիչ
- Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության, հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
- «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
- ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
- Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի իրավաբանական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ  
 ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ՝**  
**ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ**  
**ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. Սույն աշխատակարգով սահմանվում է պետական անտառները և անտառային հողերը վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) անցկացման համար ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը:

2. Հանձնաժողովի գործունեության վայրն է՝ Արցախի Հանրապետության քաղաք Ստեփանակերտ, Փետրվարի 20/1, Արցախի Հանրապետության քնապահպանության և քնական ռեսուրսների նախարարություն: Հեռախոսահամարն է՝ 374 94 16 03:

3. Հանձնաժողովն իր աշխատանքներում ղեկավարվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

4. Հանձնաժողովը՝

- 1) իրականացնում է մրցույթի նախապատրաստումն ու անցկացումը,
- 2) ուսումնասիրում է մրցութային հայտերը,
- 3) մրցույթը համարում է չկայացած,
- 4) անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներին կարող է հրավիրել փորձագետներ,
- 5) իրականացնում է հանձնաժողովին վերապահված այլ գործառույթներ:

5. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի առնվազն երեք անդամի առաջարկությամբ:

6. Յուրաքանչյուր հայտ քննարկվում է, ապա հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից գնահատվում մեկ-տաս բալանոց միավորների համակարգով՝ ըստ ներկայացված պայմանների արդյունավետության: Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի ներկայացրած հայտի գնահատված միավորների հանրագումարն առավելագույնն է մնացած մասնակիցների միավորների հանրագումարից, բայց ոչ պակաս, քան հանձնաժողովի անդամների կողմից գնահատվելիք առավելագույն միավորների հանրագումարի կեսից:

7. Հավասար միավորների դեպքում հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:

8. Հանձնաժողովն իրավագոր է, եթե հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

9. Նիստերում քննարկված հարցերը, եզրահանգումները և ընդունված որոշումներն արձանագրվում են: Արձանագրություններն ստորագրվում են մրցույթին մասնակից հանձնաժողովի անդամների կողմից, ինչպես նաև մրցույթի հաղթողը: Հանձնաժողովի անդամի կողմից հատուկ կարծիք ունենալու դեպքում այն գրավոր ներկայացվում է հանձնաժողովի նախագահին և կցվում արձանագրությանը:

10. Հանձնաժողովի նախագահը՝

